տէրս եւ այլ միաբանքս :Բ: աւր պատարագ տուին ինձ Աւետե՛ց Ա՛ստուա՛ծածնի»[186]:

Գանձասարի չինարարական վիմագրում Հասան Ջալալը Զաքարէից բացի թուարկել է նաեւ իր Մարին քրոջը («իմ քուերն Մարինո») եւ միւս երկու եղբայրներին՝ Դօլային («իմ եղբաւրն Դաւլին») եւ Իւանէին («իմ եղբաւ[ր]ն Իւանէին»): Կրկին մանրամասնելով՝ նշենք, որ Գանձասարի պարսպի մէջ հետագայում տեղադրուած երեսապատման երկու քարերի վրայի վիմագրում (ներկայումս առկայ է միայն երկրորդը, իսկ Յ. Օրբէլին տեսել է ամբողջը) յիշուած է Հասան Ջալալի կրտսեր եղբայր Իւանէի որդի Վասակը («{Կամաւն Ա՛ստուծո՛յ, ե}ս՝ Վաս[ա]կ, որդի Իւանէի, թոռն / {Վախտա}նգա, միաբանեցա սուրբ ու/{խտիս, տվի} զԲարուտաց այգին... / ի մեր տապանատունս...»[187]: *Իւանէի միւս որդի Յովհաննէսը Գանձասարի վանահայրն էր (Ա-ն), որն իր թողած 9 տողանոց արձանագրութեան մէջ (գաւթի արեւմտեան մուտքի բարաւորին) մասնաւորապէս ասում է. «Թիւ :ՉԻ:* [=1271 թ.]. *կամաւն Ա՛ստուծո՛յ, ես՝ Յոհանէս, որդի Իւանէի, առաջնորդ սո՛ւրբ ուխտիս Գանձասարա, հրամանաւ տ՛էառ՛ն Խաչինո Աթաբակին, ի յիմ հալալ արդեանց գնեցի զՎարդանաթաղս...»*[188]: *Իսկ ինչ վերաբերում է Հասան Ջալալի նախավերջին եղբօրը՝ Դօլային, ապա թւում է, թէ հէնց նա է եղել Հասան Ջալալի «եղբէր» այն Սմբատը, որի՝ Վաճառի ու Ծմակահողի միջեւ գտնուող խենչալ խաչ կոչուած վայրում կանգնեցրած 1216 թուակիր խաչքարի վիմագրում ունենք. «Թվիս :ՈԿԵ:* [=1216 թ.]: *Ես՝ Սպատ,* որդի Վախտանգայ՝ *տ՛էառ՛ն Խաչինոյ,* եղբէր *արքէին* Հասանայ, *տ՛էր Մեղրենեցն, չատ ա[չ]խատութեամբ չինեցի զԿարմիր քա[ր]ն...»*[189]: *Դժուար չէ նկատել, որ, անկասկած, այս Սմբատի որդին եղել է նոյն Մեղրենեցի (Մեղրենիս) տէր Գրիգոր Հեջուրը, որին Կիրակոս Գանձակեցին անուանում է նաեւ Գրիգոր Տղայ («զոր Տղայն կոչէին գգուանօք, յազատացն Խաչենոյ»)*[190] *եւ որի՝ Մեծարանից Ս. Յակոբավանքի սրահի հարաւային պատին թողած 13 տողանոց նուիրատուական վիմագրում ունենք. «Ես՝ Գրիգոր, որդի Սմպատա, միաբանեցա տանս Մեծարեանց... եւ տուի... :Ա: կիսավար իւր հողով ի Մեղրենիսն յիմ հայրենաբաժնէն, իմ հաւր տված Վասուրանց հողն՝ Ջալալա Դաւլին իշխանութեամբ... Թուին :ՈՂ:* [=1241 թ.]»[191]: *Մինչ այդ Գօշավանքի Ս. Աստուածածին եկեղեցու խորանի մէջ իր թողած 7 տողանոց վիմագրում նա մասնաւորապէս, յայտնում է. «Ես՝ Գրիգոր՝ հեջուր ամիրսպասալար Աւագին, որդի Սմպատա,* որդոյ Մեծին Վախտանգա՝ *կողմնապետաց աշխարհին Արցախա, առեալ աթաբակի Իւանէի՝ սնոյց զիս եւ իւր տանն եւ Աւագին*

186 Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 134 (N 450):

187 Նոյն տեղում, էջ 71 (N 204), լուսանկարը՝ տախտ. XXI: Գուցէ այս Վասակն է Բերդաձորի Ս. Գրիգոր եկեղեցու հիւսիսային պատին թողել նուիրատուական հետեւեալ 5 տողանոց անթուակիր վիմագիրը. «Ես՝ Վասակ, տվի ի սուրբ ուխ[տ]ս զՀավախաղացն ի Շատլոյսին կալէն ի վեր ի վերա Գուրակա...» (նոյն տեղում, էջ 118, N 392): Ի դէպ, Ս. Բարխուդարեանը *Հավախաղաց* տեղանուան մէջ, որ Կաչաղակաբերդն է, երկաթագիր Վ-ն վրիպմամբ վերծանել է իբրեւ բոլորագիր *յլ* տառախումբ (զՀայլախաղացն):

188 Նոյն տեղում, էջ 50 (N 122):

189 Նոյն տեղում, էջ 83-84 (N 253): *Սմբատ* անձնանուան *Սպատ* ձեւի մասին տե՛ս **Ա. Յակոբեան**, *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ*, էջ 323-327:

190 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. ԺԷ, էջ 222, ԻԶ, էջ 256, ԾԵ, էջ 358-359 («չոգաւ առ նա եւ մեծ իշխանն Խաչենոյ եւ կողմանցն Արցախու Հասան, զոր Ջալալն կոչէին գգուանօք... Եւ նա (Սարթախը *1250-ին - Ա. Յ.*) սիրով եւ մեծարանօք ընկալաւ զնա եւ զորս ընդ նմայն էին՝ *զիշխանն Գրիգոր*, զոր սովորութեամբ *Տղայն կոչէին*, եւ էր ծեր յոյնժամ, եւ զԴեսում իշխանն՝ պարկեշտ պատանի, եւ զվարդապետն Մարկոս, եւ զեպիսկոպոսն Գրիգոր»):

191 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 13 (N 6):